

ԳԵՐՇ. Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ ՀԱՆԳՍՏԻ ԿՈՉՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

2000 թվականի հուլիսի 16-ին Մայրավանքում տեղի ունեցած Պատարագի ընթացքում փոխլուսարարապետ Հայր Արտակ Տիգրանյանն ընթերցեց Վեհափառ Հայրապետի՝ Մայրավանքի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի հանգստի կոչման սրբատառ կոնդակը:

Նույն օրը,երեկոյան, ի պատիվ Մայրավանքի վաստակաշատ լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, տեղի ունեցավ սիրո ճաշկերույթ՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի նախագահությամբ:

Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը երկար տարիներ իր ծառայությունն էր բերել Մայր Եկեղեցուն և հայ ժողովրդին: Շուրջ 40 տարիներ նվիրյալ եկեղեցականը կազմակերպել էր Մայրավանքի եկեղեցական բոլոր արարողությունները: Նա, իբրև հոգևորական, ուխտել էր անձնվիրաբար քարոզել Քրիստոսի կենսաբեր Ավետարանը, երկնքի արքայության դռներ բացել մարդկանց առաջ... Երջանկահիշատակ Վազգեն Վեհափառի կողմից արժանացել էր առանձին գնահատանքի: Ահա այդ օրը բազմաբեղուն հոգևորականը հանգստի էր կոչվում, որին եկել էին իրենց հարգանքը մատուցելու Հայ Եկեղեցու թեմական առաջնորդները: Երեկոն նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Հայր Արշակ աբեղա Խաչատրյանը ճաշի ընթացքում ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի կոնդակը՝ Հուսիկ Սրբազանի հանգստի կոչման առիթով: Հուսիկ Սրբազանի երկար տարիների բերած ծառայության համար Վեհափառ Հայրապետը նրա կուրծքը զարդարեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Մեղանատանն իրենց շնորհակալական խոսքերով հանդես եկան Հայ Եկեղեցու Սրբազան Հայրերը, որոնք շեշտեցին Հուսիկ Սրբազանի նվիրվածությունն ու ծառայասիրությունը:

Ապա իրենց գնահատանքի խոսքերով հանդես եկան աշխարհի տարբեր երկրներից ժամանած հյուրեր, որոնք խոսեցին Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի՝ Հայ Եկեղեցուն բերած ավանդի մասին: Գևորգյան Հոգևոր Ճեմարանի սաները նույնպես առիթն ունեցան շնորհակալություն հայտնելու Հուսիկ Սրբազանին՝ եկեղեցական

արարողությունների նկատմամբ իրենց մեջ սերմանած սիրո և նվիրվածության համար:

Երեկոն ավարտվեց Վեհափառ Հայրապետի օրհնության և գնահատանքի խոսքով:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Միաբանության ամենապարեց անդամներից մեկն է նա: Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ավելի քան հիսուն տարիների վաստակ ունի: Մայր Աթոռի կյանքի ամենադժվարին տարիներին նա միաբանական իր ուխտն է կնքել Իջման Ս. Սեղանի առաջ և հավատարմորեն ու նվիրվածությամբ ծառայել մինչև այսօր:

Երկար տարիներ նա ծառայել է Հայ Եկեղեցուն իբրև Բաքվի-Ադրբեջանի թեմի առաջնորդ, ապա՝ իբրև Մայր Տաճարի թանգարանի վարիչ, և հետո՝ իբրև լուսարարապետ՝ միշտ նվիրվածությամբ և հավատարմությամբ, անմնացորդ կերպով:

Այսօր Գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանն արժանացել է Վեհափառ Հայրապետի գնահատանքին, նրա Սրբատառ կոնդակի «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանին, իր կյանքի 80-րդ տարեդարձի առթիվ: Հանուն Մայր Աթոռի միաբանության սրտագին շնորհավորում եմ սիրելի Սրբազան Հոր 80-ամյակը՝ մաղթելով նրան երկար, քաջառողջ ևս առավել տարիներ՝ շարունակելու իր նվիրված սպասավորությունը Մայր Տաճարում իբրև լուսարարապետ և իբրև նվիրված միաբան Մայր Աթոռի եղբայրությանը:

Երկար տասնամյակներ է, որ անձնապես ծանոթ եմ և ծառայել եմ նրա հետ Մայր Աթոռում: Նա եղել է միշտ սիրով և հարգանքով բոլոր միաբանակից եղբայրների հանդեպ և իր չափով միշտ օգտակար բոլոր նրանց, ովքեր իր կարիքն են ունեցել: Ապրել է ծառայության ոգով, քրիստոսավանդ խոնարհությամբ և մեծի ու փոքրի հանդեպ՝ հարգանքով:

Երկա՛ր ապրիր, սիրելի Հուսիկ Սրբազան, վստահ եղիր, որ Աստված քեզ կհատուցի այն, ինչ որ այստեղ, այս կյանքում պակաս կլինի:

Վարձքդ կատար, սիրելի Սրբազան:

«Երանի, որ վարձս ունիցին ի Սիոն»: